

## Ներածություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի 2024-2026թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /այսուհետ՝ ՄԺԾԾ/ հանդիսանում է Սևան համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և ելակետ է՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում են Սևան համայնքի՝ կանխատեսվող հաջորդ 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Սևան համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն համայնքին առավել արդյունավետ գեներացնելու եկամուտները, մասնավորապես՝ միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որն իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը, ըստ էության, հասանելի կդարձնի բոլորին, այդ թվում՝ քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով: Ընդ որում՝ սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվեն բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Սևան համայնքի 2024-2026թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների ՄԺԾԾ-ին վերաբերող համապատասխան հոդվածներով:

## 1. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Սևան համայնքի 2024-2026թ.թ. համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխուսելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա խնդիրներ են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Համայնքի կառավարման ներառականության բարելավումը:

- 6. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
- 7. Անվտանգ, առողջ ու հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
- 8. Աղբահանության կազմակերպման և կարգավորման և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը:
- 9. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
- 10. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Սևանի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
- 11. Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման շարունակության ապահովում:
- 12. Նախադպրոցական հաստատությունների ներառականության հնարավորությունների ապահովումը:
- 13. Հնարավորությունների դեպքում նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը:
- 14. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը, ինչպես նաև ընթացիկ ու կապիտալ նորոգումների հետ կապված խնդիրների լուծում:
- 15. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, ցանցի շարունակական ընդլայնում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի անցկացում, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացում:
- 16. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
- 17. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:
- 18. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

**2. Սևան համայնքի 2024-2026թ.թ. կանխատեսվող ընդհանուր եկամուտները**

Ելնելով Սևան միավորված համայնքի առաջին տարվա՝ 2022թվականի կատարված բյուջեի հնարավորություններից, ինչպես նաև 2023թ-ի բյուջեի կատարողականից, վերանայվել են եկամուտների կանխատեսումները և 2024-2026 թվականներին համայնքի ընդհանուր բյուջեի կանխատեսանվող եկամուտների տվյալները հետևյալն է.

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ                   | 2024<br>ԹՎԱԿԱՆ | 2025<br>ԹՎԱԿԱՆ | 2026<br>ԹՎԱԿԱՆ |
|-----|--------------------------------------------|----------------|----------------|----------------|
|     | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՈՐԻՑ | 2690,0         | 2760,0         | 2850,0         |
| Ա   | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝               | 1890.0         | 1910.0         | 1950.0         |

|   |                                                                                    |              |              |              |
|---|------------------------------------------------------------------------------------|--------------|--------------|--------------|
|   | ԸՆԴԱՄԵՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ                                                                |              |              |              |
| 1 | Ընթացիկ պաշտոնական դրամաշնորհներ                                                   | 1359,7       | 1360,0       | 1365,0       |
| 2 | Համայնքի բյուջեի սեփական եկամուտներ                                                | <b>530,3</b> | <b>550,0</b> | <b>585,0</b> |
| Բ | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝<br>ԸՆԴԱՄԵՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ                                | 1300,0       | 1400,0       | 1500,0       |
| 1 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի<br>ֆինանսավորման նպատակով ստացվելիք<br>սուբվենցիա | 800,0        | 850,0        | 900,0        |
| 2 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից<br>հատկացում ֆոնդային բյուջե                   | <b>500,0</b> | <b>550,0</b> | <b>600,0</b> |

**2024-2026 թվականների համար համայնքի բյուջեի գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր եկամուտները.**

- 2024 թվականին 2 690.0 մլն. դրամ /աճը 2023թ-ի փաստացի բյուջեի նկատմամբ՝16,9 տոկոս/.
- 2025թ.-ին 2 760,0 մլն դրամ /աճը 2024թվականի բյուջեի նկատմամբ՝ 2,6 տոկոս/.
- 2026թ.-ին 2 850.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 3,3 տոկոս/:

**2024-2026 թվականների համար համայնքի վարչական բյուջեի գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր եկամուտները.**

- 2024 թվականին 1 890.0 մլն. դրամ /աճը 2023թ.-ի փաստացի բյուջեի նկատմամբ՝ 21,2 տոկոս/
- 2025թ.-ին 1 910,0 մլն դրամ /աճը 2024թվականի բյուջեի նկատմամբ՝ 1,1 տոկոս/
- 2026թ.-ին 1 950.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 2,1 տոկոս/

**2024-2026 թվականների համար համայնքի վարչական բյուջեի սեփական եկամուտների գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր եկամուտները.**

- 2024 թվականին 530,3 մլն. դրամ /աճը 2022թ-ի փաստացի կատարողականի նկատմամբ՝ 9,9 տոկոս/
- 2025թ.-ին 550,0 մլն դրամ /աճը 2024 թվականի բյուջեի նկատմամբ՝ 3,7 տոկոս/
- 2026թ.-ին 585,0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 6,4 տոկոս/

**2024-2026 թվականների համար համայնքի ֆոնդային բյուջեի գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր եկամուտները՝ առանց ոչ ֆինանսական միջոցների օտարման գումարների**

- 2024 թվականին 1 300.0 մլն. դրամ /աճը 2023թ-ի փաստացի բյուջեի նկատմամբ՝ 28,9 տոկոս/
- 2025թ.-ին 1 400,0 մլն դրամ /աճը 2024թվականի բյուջեի նկատմամբ՝ 7,6 տոկոս/
- 2026թ.-ին 1 500.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 7,1 տոկոս/:

2024 թվականի եկամուտների կանխատեսումները 2023 թվականի համեմատ ավելի բարձր են, քան 2025-2026 թվականներն են: Այդպիսի աճի կանխատեսումները պայմանավորված են պետական բյուջեից ստացվող դոտացիաների գումարների զգալի աճով, որը հնարավորություն է տվել համայնքին այդ գումարների հաշվին մեծացնել վարչական բյուջեի աճը և դրանում ներառված պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացման գումարը: Կանխատեսված աճը զգալիորեն գերազանցում է 2023թ.-ի ֆոնդային բյուջեի կատարողականին:

### 3. Եկամուտների վերծանումն ըստ առանձին եկամտատեսակների

Համայնքի ՄԺԾԾ-ում համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումները հետևյալն են.

ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄՆԵՐՈՎ

| Հ/Հ   | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ                                                  | 2024<br>ԹՎԱԿԱՆ | 2025<br>ԹՎԱԿԱՆ | 2026<br>ԹՎԱԿԱ<br>Ն |
|-------|---------------------------------------------------------------------------|----------------|----------------|--------------------|
|       | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՈՐԻՑ</b>                         | <b>2690,0</b>  | <b>2760,0</b>  | <b>2850,0</b>      |
| Ա     | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝<br>ԸՆԴԱՄԵՆԸ, ՈՐԻՑ                            | 1890.0         | 1910.0         | 1950.0             |
| 1     | Հարկեր և տուրքեր                                                          | 460.0          | 470,0          | 495,0              |
| 1,1   | Գույքային հարկեր, որից                                                    | 137,0          | 137,0          | 152,0              |
| 1.1.1 | Անշարժ գույքի հարկ                                                        | 112.0          | 120,0          | 140,0              |
| 1.2   | Փոխադրամիջոցների գույքահարկ                                               | 300.0          | 310,0          | 320.0              |
| 1.3   | Տեղական տուրքեր                                                           | 10.0           | 10.0           | 10.0               |
| 1.4   | Պետական տուրքեր                                                           | 13.0           | 13.0           | 13.0               |
| 2     | Պաշտոնական դրամաշնորհներ, որից                                            | 1359.7         | 1360,0         | 1365,0             |
| 2.1   | Պետական բյուջեից տրվող դոտացիա                                            | 1355.1         | 1355,4         | 1360,4             |
| 2,2,  | Ընթացիկ ծախսերի իրականացման համար<br>պետական բյուջեից տրվող սուբվենցիա    | 2.4            | 2.4            | 2.4                |
| 2,3,  | Պատվիրակված լիազորություններ                                              | 2.2            | 2.2            | 2.2                |
| 3     | Այլ եկամուտներ                                                            | 70,3           | 80,0           | 90,0               |
|       | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>                                        | <b>530,3</b>   | <b>550,0</b>   | <b>585,0</b>       |
| Բ     | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ<br>ԸՆԴԱՄԵՆԸ, ՈՐԻՑ                             | <b>1300.0</b>  | <b>1400.0</b>  | <b>1500.0</b>      |
| 1     | Կապիտալ ծախսերի իրականացման համար<br>պետական բյուջեից տրվող սուբվենցիա    | 800.0          | 850.0          | 900.0              |
| 2     | Համայնքի վարչական բյուջեի պահուստային<br>ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե | 500.0          | 550.0          | 600.0              |

Սևան համայնքի 2024-2026թ.թ. եկամուտների կազմում սեփական եկամուտների տեսակարար կշռի ցուցանիշը համապատասխանաբար կազմում է՝

- 2024թ.-ին՝ 530,3.0 մլն. դրամ /վարչական բյուջեի 28.1 տոկոս/

- 2025թ.-ին՝ 550.0 մլն. դրամ /վարչական բյուջեի 28.8 տոկոս/

- 2026թ.-ին՝ 585.0 մլն. դրամ /վարչական բյուջեի 30.0 տոկոս/

կամ սեփական եկամուտների աճը կանխատեսվում է անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի աճերով:

Միջնաժամկետ ծախսային ծրագրերի իրականացման համար աճ է կանխատեսվում նաև պաշտոնական դրամաշնորհների, մասնավորապես՝ համահարթեցման դոտացիայի գծով. 2024թ.-ի աճը 2023թ.-ի համեմատ կազմում է շուրջ 441,0 մլն դրամ կամ 48,2 տոկոս, ինչն աննախադեպ աճ է վերջին 10-15 տարիների համար, իսկ 2025 և 2026թվականների աճը 2024թ.-ի նկատմամբ միջին հաշվարկով տարեկան 2,5 տոկոս է, ինչը կանխատեսելի էր 2023թ.-ին: Պետական բյուջեից կապիտալ ծախսերի իրականացման նպատակով տրվող սուբվենցիաների գծով 2024-2026թվականների համար կանխատեսվում է միջին տարեկան 6,25 տոկոսի աճ, իսկ միայն 2024թ.-ին սուբվենցիայի աճը 2023թ.-ի համեմատ ավելի բարձր է /37,5 տոկոս/, քան 2024-2026թվականների համար: Դա նշանակում է, որ ինչպես պետության ուշադրությունն է ավելանում միավորված համայնքների հանդեպ, այնպես էլ մեծանում են ռիսկերը սուբվենցիոն ծրագրերի կատարման, այնպես էլ գյուղական բնակավայրերում կապիտալ ծախսերի իրականացման ու ներգրավման գործում: Այլ կերպ ասած, այսպիսի դինամիկայով պետական աջակցության միջոցների ավելացումը սուբվենցիայի հաշվին հնարավորություն կստեղծի ապահովել համայնքայի բյուջեով նախատեսված ներդրում ապահովումը ինչպես բուն համայնքում, այնպես էլ գյուղական բնակավայրերում:

2024թ.-ին պաշտոնական դրամաշնորհները կանխատեսվում են երեք տարվա միջինով՝ 1358,6 մլն. դրամի սահմաններում:

Պետական բյուջեից տրվող սուբվենցիոն ծրագրերի համար կանխատեսվում են՝

- 2024 թվականի համար 800.0 մլն. դրամի չափով /աճը 2023 թվականի փաստացի ստացվածի համեմատ կազմում է 2,5 անգամ, ինչը իր մեջ պարունակում է մեծ ռիսկ/: Այդպիսի բարձր կանխատեսումը կամ ռիսկը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարիներ շարունակ, հատկապես համայնքի միաորումից հետո, կազմված և հավանության արժանացած ծրագրեր՝ ֆինասական միջոցների սղության և այլ պատճառներով, տարեց-տարի տեղափոխվել են և հասցվել 2024 թվական:

- 2025 թվականի համար կապիտալ սուբվենցիա է կանխատեսվել 850.0 մլն. դրամ /աճը 2024 թվականի համեմատ կազմում է 6,2 տոկոս/.

- 2026թվականին՝ 900.0 մլն. դրամ /աճը 2024 թվականի համեմատ կազմում է 5,9 տոկոս/:

Ընդ որում, անշարժ գույքի հարկի աճը, համայնքի բյուջեի համար որպես կարևորագույն եկամտատեսակ՝ ունի առանձնահատկություն: Կանխատեսվող աճի 20.0 տոկոսն ապահովվելու է անշարժ գույքի հարկի օրենքով սահմանված դրույքաչափի տարեկան աճի հաշվին, իսկ մնացածը՝ 80.0 տոկոսը, վարչարարության իրականացման հաշվին:

Հատկանշական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես՝ հարկ է նկատել Սևան համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից, ինչպես նաև տրանսպորտային գույքահարկի գծով:

Ելնելով յուրաքանչյուր տարվա սեփական եկամուտների կատարողականից՝ կանխատեսվում է սեփական եկամուտների գծով աճ. 2025թվականին՝ 3,7 տոկոս 2024թվականի նկատմամբ, 6,3 տոկոս 2026 թվականին՝ 2025թվականի նկատմամբ:

**4. Սևան համայնքի 2024-2026թ.թ. կանխատեսվող ընդհանուր ծախսերը**

Սևան համայնքի միավորման առաջին տարվա՝ 2022 թվականի բյուջեի ծախսերի կատարման տվյալներից, ինչպես նաև 2023թ.-ի բյուջեի կատարողականից վերանայվել են ծախսերի կանխատեսումները, և 2024-2026 թվականներին համայնքի ընդհանուր բյուջեի կանխատեսվող ծախսերի տվյալները հետևյալն է.

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ                                                            | 2024<br>ԹՎԱԿԱՆ | 2025<br>ԹՎԱԿԱՆ | 2026<br>ԹՎԱԿԱՆ |
|-----|---------------------------------------------------------------------------------|----------------|----------------|----------------|
|     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ</b>                              | <b>2690,0</b>  | <b>2760,0</b>  | <b>2850,0</b>  |
| 1   | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ                                                | 1890.0         | 1910.0         | 1950.0         |
| 2   | ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ ԱՌԱՆՑ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՄՈՒՏՔԵՐԻ | <b>1300,0</b>  | <b>1400,0</b>  | <b>1500,0</b>  |
| 3   | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՄՈՒՏՔԵՐ                                         | 360,0          | 370,0          | 380,0          |
| 4   | ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՄՈՒՏՔԵՐՈՎ      | <b>1660.0</b>  | <b>1770,0</b>  | <b>1880,0</b>  |

**Համայնքի բյուջեի գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր ծախսերը.**

- 2024 թվականին 2 690.0 մլն. դրամ /աճը 2023թ-ի փաստացի կատարված բյուջեի նկատմամբ կազմում է 17,0 տոկոս/.
- 2025թ.-ին 2 760,0 մլն դրամ /աճը 2024թվականի բյուջեի նկատմամբ՝ 2,6 տոկոս/.
- 2026թ.-ին 2 850.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 3,3 տոկոս/:

**Համայնքի վարչական բյուջեի գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր ծախսերը.**

- 2024 թվականին 1 890.0 մլն. դրամ /աճը 2023թ-ի փաստացի կատարվածի բյուջեի նկատմամբ կազմում է 25,5 տոկոս/
- 2025թ.-ին 1 910,0 մլն դրամ /աճը 2024 թվականի բյուջեի նկատմամբ՝ 1,1 տոկոս/.
- 2026թ.-ին 1 950.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 2,1 տոկոս/:

**Ոչ ֆինանսական միջոցների օտարման գումարներ են կանխատեսվել՝**

- 2024 թվականի համար 360,0 մլն. դրամ /աճը 2023 թվականի փաստացի կատարողականի նկատմամբ չի նախատեսվում՝ կապված այն հանգամանքի հետ, որ տարեցտարի օտարման ենթակա հատկապես հողատարածքները պակասում են/:
- 2025 թվականի համար 370,0 մլն. դրամ /աճը 2024 թվականի համեմատ կազմում է 2.8 տոկոս/.
- 2026 թվականի համար 380,0 մլն. դրամ /աճը 2024 թվականի համեմատ կազմում է 2.7 տոկոս/:

**Ոչ ֆինանսական միջոցների օտարման գումարների հետ միասին համայնքի ֆոնդային բյուջեի գծով կանխատեսվել են հետևյալ ընդհանուր ծախսերը**

- 2024 թվականին 1 660.0 մլն. դրամ /աճը 2023թ.-ի փաստացի բյուջեի կատարողականի նկատմամբ կազմում է 57,5 տոկոս/.
- 2025թ.-ին 1 770,0 մլն դրամ /աճը 2024թվականի բյուջեի նկատմամբ՝ 6,6 տոկոս/.
- 2026թ.-ին 1 880.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 6,2 տոկոս/:

**Համայնքի 2024-2026թվականների կանխատեսվող ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման**

Ընդհանուր ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման.

Կանխատեսվող ծախսերը ներկայացվում են հետևյալ խմբերով՝

մլն. դրամ

| Հ/Հ | Ծախսերի անվանումը                         | 2024թ.        | 2025թ.        | 2026թ.        |
|-----|-------------------------------------------|---------------|---------------|---------------|
| 1   | Աշխատանքի վարձատրություն                  | 275.0         | 290.0         | 300.0         |
| 2   | Ծառայությունների և ապրանքների գնում       | 125,0         | 130.0         | 135.0         |
| 3   | Սուբսիդիաներ                              | 820.0         | 850.0         | 885.0         |
| 4   | Ընթացիկ դրամաշնորհներ                     | 4.0           | 5.0           | 5.0           |
| 5   | Նպաստներ                                  | 20.0          | 22.0          | 25.0          |
| 6   | Այլ ծախսեր,որից                           | 646,0         | 613,0         | 600,0         |
| 7   | Պահուստային միջոցներ                      | 500,0         | 550,0         | 600,0         |
|     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ</b>            | <b>1890.0</b> | <b>1910,0</b> | <b>1950,0</b> |
| 7   | Հիմնական միջոցներ                         | 1300.0        | 1400.0        | 1500.0        |
| 8   | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 360,0         | 370.0         | 380.0         |
|     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ</b>            | <b>1660,0</b> | <b>1770,0</b> | <b>1880,0</b> |
|     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ</b>   | <b>3050,0</b> | <b>3130,0</b> | <b>3230,0</b> |

- Ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համայնքի ընդհանուր բյուջեի ծախսերը, հաշվի առած ոչ ֆինանսական ակտիվների օտարման գումարները, կանխատեսվել են հետևյալ չափերով՝
- 2024 թվականի համար 3050.0 մլն. դրամ՝ աճը 2023թվականի փաստացի կատարողականի հանդեպ կազմում է 2.9 անգամ:

- 2025 թվականին 3 130,0 մլն դրամ /աճը 2024թվականի բյուջեի նկատմամբ՝ 2,6 տոկոս/.

-2026 թվականին 3 230.0 մլն. դրամ /աճը 2025թվականի բյուջեի նկատմամբ՝ 3,2 տոկոս/:

2024թվականի կանխատեսվող այսպիսի աճը պայմանավորված է պետական բյուջեից համայնքին հատկացվող դոտացիայի, ինչպես նաև պետական բյուջեից կապիտալ ծախսերի համար հատկացվելիք սուբվենցիայի աճով:

Բնականաբար, կանխատեսվող ծախսերի այսպիսի աճի տեմպերն իրենց ազդեցություն են թողնում ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի վրա:

ՄԺԾԾ ծախսերը կանխատեսվում են եկամուտներին համամասնորեն և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը:

Ծախսերը նախագծվել են՝ հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն՝ ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Կանխատեսվող ծախսերի աճը տարածվում է ինչպես ամբողջ ընդհանուր ծախսերի, այնպես էլ տնտեսագիտական ծախսերի բոլոր տեսակների վրա, այդ թվում՝ այնպիսի կարևորագույն հոդվածների վրա, ինչպիսիք են աշխատավարձի, ՀՈԱԿ-ին տրվող սուբսիդիաների և պահուստային միջոցների գծով ծախսերը:

Կանխատեսվող ծախսերից ռիսկային ծախսեր կան միայն կապիտալ ծախսեր մեջ, որը կապված է ոչ ֆինանսական ակտիվների՝ հողի օտարումներից ստացվող եկամուտների հետ: Համայնքի հողային հաշվեկշռում առկա օտարման ենթակա հողատարածքները սահմանափակ են, և յուրաքանչյուր տարի դրանց քանակը նվազում է ,և այդ իմաստով ծախսերի կատարումը դառնալու է ռիսկային: Անհրաժեշտություն է առաջացել փոխել համայնքային ֆոնդային բյուջեների ծախսման օրենսդրական կարգը և նոր հնարավորություններ ստեղծել լրացնելու այդ բացը: Այդպիսի հնարավորությունը կարող է համարվել պետական բյուջեի օրենսդրական դաշտի կրառումը և տարածումը համայնքների վրա:

**5. Բյուջետային ծախսերի կանխատեսումը՝ ըստ ոլորտների**

**/գործառնական դասակարգման/**

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքները պայմանավորված են Սևան համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում առաջացած խնդիրների լուծման տեսլականներով: Այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառնական խմբերում և բաշխված է հետևալ կերպ:

միլիոն դրամ

| Հ/Հ | Ծախսերի անվանումը                          | 2024<br>ԹՎԱԿԱՆ | 2025<br>ԹՎԱԿԱՆ | 2026<br>ԹՎԱԿԱՆ |
|-----|--------------------------------------------|----------------|----------------|----------------|
| 1   | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 600,0          | 610,0          | 620,0          |
| 2   | Տնտեսական հարաբերություններ                | 1480,0         | 1500,0         | 1500.0         |

|   |                                                                                     |               |               |               |
|---|-------------------------------------------------------------------------------------|---------------|---------------|---------------|
| 3 | Շրջակա միջավայրի պաշտպանություն                                                     | 250.0         | 255.0         | 260.0         |
| 4 | Բնակարանային տնտեսություն և կոմունալ ծառայություններ                                | 120.0         | 13.0          | 15.0          |
| 5 | Մշակույթ                                                                            | 75.0          | 180.0         | 110.0         |
| 6 | Կրթություն                                                                          | 505.0         | 550.0         | 700.0         |
| 7 | Սոցիալական պաշտպանություն                                                           | 20.0          | 22.0          | 25.0          |
|   | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային միջոցներ, որից հատկացումներ ֆոնդային բյուջե | 500.0         | 550.0         | 600,0         |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>                                                              | <b>3050,0</b> | <b>3130,0</b> | <b>3230,0</b> |

Ծախսերի կանխատեսման այսպիսի համաչափությունն ապահովում է համայնքի կայուն զարգացում և հնարավորություն է տալիս լուծել առաջնահերթ խնդիրներ՝ հատկապես կատարել գումարների տեղաշարժ, հնարավորություն ստեղծել մի ոլորտից գումարներն ուղղել մյուս ոլորտներ: Համայնքի առանձին բնագավառների խնդիրների լուծումից հետո հաջորդ փուլում կամ հաջորդ տարի առկա գումարներն ուղղել չլուծված խնդիրների լուծմանը կամ պահպանել համայնքի ու նրա գյուղական բնակավայրերի համաչափ զարգացումը:

Բացի այդ՝ համայնքում իրականացվում են նաև այլ ծրագրեր, որոնց ֆինանսավորման 80.0-ից 90.0-ը տոկոս իրականացվում է դոնոր միջազգային կազմակերպությունների, մնացած 10.0-ից 20.0 տոկոսը՝ համայնքային ներդրման հաշվին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը շատ ավելի դիսկային են, քան մյուս ծրագրերը, ուստի այդպիսի ծրագրերի կանխատեսումներ չեն արվել: Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, որպես կանոն քննարկվում և առաջանում են յուրաքանչյուր տարվա ընթացքում, որոնք խոշոր կամ էական ազդեցություն չեն թողնում մյուս կապիտալ ծրագրերի իրականացման վրա:

Աղյուսակի տվյալները վկայում են, որ մի բնագավառի գումարները փոքրանում են, մյուս տարի մեկ այլ բնագավառում շեշտակի աճում: Օրինակ՝ 2025թ.-ին համայնքի մշակութային հիմնարկությունների պահպանման և միջոցառումների իրականացման ծախսերը կազմելու են 75,0 մլն. դրամ իսկ մնացած 105,0 մլն. դրամն ուղղվելու է մշակութային շենք-շինությունների հիմնանորոգումների կապիտալ ծրագրերի իրականացմանը, իսկ հաջորդ՝ 2026թ.-ին այդ գումարներն ուղղվելու են արդեն կրթության ոլորտ՝ իրականացնելով կրթության ոլորտի ծրագրերի իրականացում և այդպես շարունակ:

Նման քաղաքականության իրականացման գործում կարևոր նշանակություն է ստանում պետության աջակցության, մասնակցության ավելացման բաժինը, ինչն արդեն կատարվել է 2024թվականին՝ համեմատած 2023թվականի հետ :


### **Համայնքի բյուջեի 2024-2025թ.թ. կանխատեսվող դեֆիցիտը**

Սկան համայնքի 2024-2026թ.թ. համար միջնաժամկետ ծախսային ծրագրերում բյուջեների դեֆիցիտը կանխատեսվում է՝ պայմանավորված նախորդ երկու տարիների բյուջեի տարեսկզբյան ազատ մնացորդի միջին մակարդակով: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր տարի առաջանում է և վարչական, ֆոնդային բյուջեների գծով դեֆիցիտը /հավելուրդը/, սակայն վարչական բյուջեի հավելուրդը՝ կապված ֆոնդային բյուջեի միջոցների սղության հետ, ամբողջությամբ, ֆոնդային բյուջեի

մնացորդի հետ միասին, ուղղվում է ֆոնդային բյուջե՝ նախորդ տարիներին կատարված, սակայն չֆինանսավորված ծրագրերի ֆինանսավորմանը:

2024թվականի համար համայնքում կանխատեսվող բյուջեի դեֆիցիտը կազմում է 73,9 միլիոն դրամ /վարչական բյուջեի գծով՝ 53,0 միլիոն դրամ, ֆոնդային բյուջեի գծով՝ 20,6 միլիոն դրամ/, որը ամբողջությամբ ուղղվելու է համայնքի 2024թվականի ֆոնդային բյուջեի ծախսերի ծածկմանը: Կանխատեսվում է համապատասխանաբար 2025թվականի համար 60.0միլիոն դրամ և 2026թվականի համար՝ 75.0 մլն. դրամ: Այդ գումարներն ամբողջությամբ ուղղվելու են համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային նպատակների իրականացմանը:

Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի  
ավագանու՝ 12.03.2024թ. N 26-Ա որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԵՎԱՆԻ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆԻ 2023ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2023 թվականի հիմնական միջոցների և գույքի գույքագրումը, գործող կարգի համաձայն, կատարվել է ըստ առանձին կազմակերպությունների: Գույքագրման արդյունքների վերաբերյալ փաստաթղթերի կրկօրինակները ներկայացվել են համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժին:

Համայնքի նախադպրոցական, արտադպրոցական հիմնարկների ինչպես նաև կոմունալ տնտեսության գույքագրման ընդհանրացված ամփոփագիրը ներկայացված է հետևյալ ցուցանիշներով:

Ա. 01.01.2023թ-ի դրությամբ մշակութային, նախադպրոցական, արտադպրոցական թվով 17 ՀՈԱԿ-ի գույքի արժեքը՝ հիմնական միջոցների և գույքի հաշվեկշռային արժեքը կազմել է ընդամենը՝ 250 602,9 հազար դրամ

Բ. 01.01.2023թ-ի դրությամբ կոմունալ տնտեսության երկու կազմակերպությունների գույքի արժեքը՝ հիմնական միջոցների և գույքի հաշվեկշռային արժեքը կազմել է ընդամենը՝ 59 620,4 հազար դրամ:

Սևան խոշորացված համայնքի 2023 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ գույքագրման արդյունքները ունեն հետևյալ պատկերը.

Ա. 31.12.2023թ-ի դրությամբ մշակութային, նախադպրոցական, արտադպրոցական թվով 17 ՀՈԱԿ-ի /այդ թվում գյուղական բնակավայրերի նախակրթարաններ/ հիմնական միջոցների և գույքի հաշվեկշռային արժեքը կազմել է ընդամենը՝ 255 775,9 հազար դրամ

2023թ-ի ընթացքում ՀՈԱԿ-ի կողմից դուրս է գրվել 530,2 հազ. դրամի անօգտագործելի, ոչ պիտանի, դուրս գրման ենթակա գույք և հիմնական միջոցներ: Տարբեր ծրագրերի, նվիրատվությունների և համայնքի բյուջեի միջոցների հաշվին ստացվել են 5 703,2 հազար դրամի հիմնական միջոցներ և գույք:

Բ. 31.12.2023թ-ի դրությամբ կոմունալ տնտեսության երկու կազմակերպությունների գծով դուրս գրումներ չեն կատարվել: «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և

բարեկարգում» ՀՈԱԿ-ը ձեռք է բերվել 120 252,8 հազար դրամի հիմնական միջոցների և գույք: Հիմնական միջոցների ձեռք բերման, այդ թվում մեկական հատ «Բազմաֆունկցիոնալ էքսկավատոր»-ի, «Բազմաֆունկցիոնալ մինի ամբարձիչ»-ի, «Ավտոգրեյդեր»-ի և 2 հատ «Անվավոր տրակտորներ»-ի համար աջակցել է ՀՀ Կառավարությունը ի դեմս «Հայաստանի զարգացման հիմնադրամը»-ի: Այս գործում իր ներդրումն է ապահովել համայնքը:

Կոմունալ տնտեսության երկու կազմակերպությունների գծով գույքի հաշվեկշռային գույքի արժեքը տարեվերջին կազմել է 179 873,2 հազար դրամ:

Հավելված 2  
Հայաստանի Հանրապետության  
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի  
ավագանու՝ 12.03.2024թ. N 26-Ա որոշման



**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԱԿ -ներ**

|   | Անվանում                                 | Մնացորդ<br>ն առ.<br>31.12.2022<br>թ. | Դուրս է գրվել<br>հիմն. միջոցներ և<br>արագամաշ<br>առարկաներ |             | Ստացվել է<br>հիմնական<br>միջոցներ և<br>արագամաշ<br>առարկաներ |               | Մնացորդ<br>ն առ.<br>31.12.2023<br>թ. |
|---|------------------------------------------|--------------------------------------|------------------------------------------------------------|-------------|--------------------------------------------------------------|---------------|--------------------------------------|
|   |                                          |                                      | քանակ                                                      | գումար      | քանակ                                                        | գումար        |                                      |
| 1 | <b>թիվ 1 &lt;&lt;Բողբոջ&gt;&gt; մ/մ</b>  |                                      |                                                            |             |                                                              |               |                                      |
|   | ա/հիմնական միջոցներ                      | 11146.3                              | 17                                                         | 2.8         | 50                                                           | 1001.0        | 12144.5                              |
|   | բ/ արագամաշ առարկա                       | 2836.9                               | 92                                                         | 42.6        | 10                                                           | 38.0          | 2832.3                               |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                          | <b>13983.2</b>                       |                                                            | <b>45.4</b> |                                                              | <b>1039.0</b> | <b>14976.8</b>                       |
|   | <b>Ծաղկունքի<br/>նախակրթարան</b>         |                                      |                                                            |             |                                                              |               |                                      |
|   | ա/հիմնական միջոցներ                      | <b>1983.0</b>                        |                                                            |             | <b>5</b>                                                     | <b>172.0</b>  | 2155.0                               |
|   | բ/ արագամաշ առարկա                       | <b>147.3</b>                         |                                                            |             | <b>1</b>                                                     | <b>45.0</b>   | 192.3                                |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                          | <b>2130.3</b>                        |                                                            |             |                                                              | <b>217.0</b>  | <b>2347.3</b>                        |
| 2 | <b>թիվ 2 &lt;&lt; Զարթոնք&gt;&gt;մ/մ</b> |                                      |                                                            |             |                                                              |               |                                      |
|   | ա/հիմնական միջոցներ                      | 20874.5                              | 2                                                          | 40.0        | 6                                                            | 392.0         | 21226.5                              |
|   | բ/ արագամաշ առարկա                       | 1583.3                               | 3                                                          | 40.7        | 130                                                          | 329.8         | 1872.4                               |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                          | <b>22457.8</b>                       | <b>5</b>                                                   | <b>80.7</b> | <b>136</b>                                                   | <b>721.8</b>  | <b>23098.8</b>                       |
|   | <b>Նորաշենի<br/>նախակրթարան</b>          |                                      |                                                            |             |                                                              |               |                                      |

|   |                                                |                |   |              |     |              |                |
|---|------------------------------------------------|----------------|---|--------------|-----|--------------|----------------|
|   | ա/հիմնական միջոցներ                            | 723.0          |   |              |     |              | 723.0          |
|   | բ/ արագամաշ առարկա                             | 420.0          |   |              |     |              | 420.0          |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                | <b>1143.0</b>  |   |              |     |              | <b>1143.0</b>  |
| 3 | <b>թիվ 3 &lt;&lt;Հեքիաթ&gt;&gt; մանկ</b>       |                |   |              |     |              |                |
|   | ա/հիմնական միջոցներ                            | 8567.1         |   |              | 7   | 192.0        | 8759.1         |
|   | բ/ արագամաշ առարկա                             |                |   |              |     |              |                |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                | <b>8567.1</b>  |   |              |     | <b>192.0</b> | <b>8759.1</b>  |
